

ՏՆՕՐԷՆ - ԽՈՐՀԱՆԳՐԱՓՈՒՅՑ

Հ. ՄԱՍՈՒՐԵԱՆ

ՐԱԺՄԵՆՈՐԴԱԳՐՈՒՅԻՒՆ

ՏԱՐԻՆ	500 ՂՐԷ
ՎԵՑԱՍՍԵԱՑ	250 »
ԵՐԱՍՍԵԱՑ	150 »

Քաղաքային օրվան համար
ամեն ամսոյ 1 ին և 15 ին



Fondateur

M. Mamourian

Directeur - Rédacteur en chef

H. MAMOURIAN

ARÉVELIAN MAMOUL,
JOURNAL ARMÉNIEN
QUOTIDIEN

100 ՓԱՐԱ

ՕՐԱԹԵՐԹ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

100 ՓԱՐԱ

ԱՍԵՐԻԿԵԱՆ ՆՊԱՍՏԱՄԱՏՈՅՑԸ ԵՒ ԻԶՄԻՐԻ ՀԱՅԵՐԸ

Անշուշտ ընթերցողներն կարողացին որ Ամերիկայէ նպատաստամատոյցի և Ամերիկեան կարմիր խաչի քննիչ յանձնախումբ մը հասած է քաղաքս և տեսակցութիւն մը ունեցած է Առաջ. Տեղապահ Հօր հետ:

Փառաք յայտնած էինք որ այդ տեսակցութիւնը գաղտնի չպահուեր, փողօրի հեռագրին նման և մերկայաբանոց հանրութեան անջնա գրուէր:

Այս երկրորդ քննիչն է որ կ'հասնի Իզմիր, տեղւոյս բրիտիսի և կարմիր խաչի գործառնութիւններուն քննութեան համար:

Առաջինն հասաւ Պօլսէ Տօք. Քիչարտա, որ առանց բան մը ընելու մեկնեցաւ և շատ քննական էր որ որ բան մը չկրնար ընել, որովհետեւ իր գաւազնի իբրև բփխչ պաշտօն ունէր տեղս զրկուած մարմնոյն մէջ:

Տօք. Քիչարտա տեղւոյս մարմնոյն անդամութիւններէ տմանց զէմ լարուած և սրտնեղած Իզմիր եկաւ, որոշ մտադրութեամբ մը գտնուեց հեռացնելու համար, սակայն անոնց վայելած համալրական միջնորդուն երբոր բացատրեցինք իրեն, ետ կեցաւ այդ ձախող քայլերէն և մեկնեցաւ, չենք գիտեր ինչ տեսակ տեղեկագիր մը ղրկելով կեղծում:

Այժմ ահա երկրորդ քննիչ մտաբնին է որ կ'հասնի Իզմիր և յօստանք թէ սննդաբաններն պիտի կատարէ իր քննութիւնն և արդարութեամբ մը պիտի տեսակցութիւն ինչ որ ճշմարիտ է և սքողուելու անկարելի:

Շատ անգամներ ըսած էինք և դալձեալ կ'իրկինք, Ամերիկացի ժողովուրդն իր ստատաձեռնութիւնն հոյ տաւ պատճառով ի սպաս գրած է և ինչպէս կ'հաւատար Ամերիկայէ անցողակի քաղաքէս անցնող ազգային մըն ալ, ամերիկեան ժողովուրդը որ այնքան տառա ձեռնութեամբ և անհաշիւ կեղծով կը մասնակցի բրիտիսի նպատակին միմիայն Հայոց համար կ'կարծէ թէ կ'տարբարէ իր տուած գումարներն և հրապարակային տանտարանութեանց մէջ, բրիտիսի անգամներն Հայոց անուամբ կ'ընեն հանգանակութիւններն և եթէ ամերիկեան ժողովուրդը ամենափոքր կասկած մը ունենայ թէ իր նուիրաբուծութիւններէն կ'օգտուին նաև տարբեր տարրեր, կրնանք սպասել ըլլալ թէ սանդղակ մը իսկ չեն քաշար բարձրելու անուան:

Մենք առաջի վայրկեանէն վստահ ըլլալով այս ճշմարտութեան հարկ եղած բողոքները մամուլ մէջ ընելէ զատ, ուղղակի կեղծումական յանձնաժողովին և Պօլսոյ Թուրքիոյ կեղծումին առանձին նամակներով հարկ եղած զիմունելուն ըրինք, տեղւոյս իրաց վիճակը պատկերացնելով և դարման հայցելով:

Ուրախ ենք որ անշուշտ չմնաց մեր ձայնը և առաջին անգամ Պօլսէն հասաւ քննիչ մը, Տօք. Քիչարտա, որ մեր զրկած նամակն ձեռքը, քննեցաւ կեղծութեամբ Օր. Չարբեանի ներկայացաւ խմբ. գրաստանս և խոստով գլխով, զայրացած շարժումներով կարծեց խնդրել մեր ձայնը կամ զմեզ խրատեցնել, բայց երբ հարկ եղածներն իրեն ըսինք, հուժկու և անյողողող կերպով և երբ ըմբռնեց թէ մենք իրմէ աւելի իրազեկ էինք բրիտիսի նպատակին, գառնուկի մը նման կակղեցաւ և կրկին ու կրկին խնդրեց որ այցելենք Թուրք-Ամերիկեան հրահանգն, մօտէն իրազեկ ըլլալու համար այդ հաստատութեան զուտ ամերիկեան ըլլալուն, բացէ ի բաց մերժեցինք, ըսելով որ այդ չէնք մեզի ստակում կ'պատճառէր և հին յիշատակներ կ'բերէր ոչ միայն մեզի, այլ բոլոր Իզմիրի հայութեան:

Տօք. Քիչարտա որ բոլորովին տարբեր քաղաքականութեան մը հետեւելու նպատակով և յետին մտքերով հասած էր Իզմիր, չյաջողեցաւ իր ծրարներն ունէլ և մեկնելէն առաջ սկսաւ լու յարաբերութիւններ մշակել, նոյնիսկ այն անձներուն հետ՝ որոնց զէմ լարուած գրութեամբ հասած էր քաղաքս:

Այժմ ինչպէս տեղեկացանք Ամերիկայէ հասած է նոր քննիչ յանձնախումբ մը մը նախագահութեամբ Մր. Վիլքրի, տեղւոյս ամերիկեան նպատաստամատոյցի գործառնութիւններն քննելու համար և տեսակցութիւն մը ունեցած է Տեղապահ Հօր հետ:

Մենք պիտի խնդրենք որ Տեղապահ Հայրն որ սկիզբէն տեղեկի չէ մանրամասնորէն (Ամերիկ. նպատաստամատոյցի տեղւոյս մէջ ունեցած գործունէութեան, վերապահորէն վերաբերուէր այդ յանձնախումբին հետ և ժողովուրդը հազորը ընէր անցուցարածներուն):

Իզմիրի հայութիւնն որ անհուն, անսահման հաւատք ու վստահութիւն ունի և ունեցած է միշտ Ամերիկեան մեծ ազգին վրայ և անոր կողմէ հոյութեան կրած վերջին գողոթային բնձնուած անմոռանալի օժանդակութիւնն յուզումով և հոգեկան անհուն երախտաբարտութեամբ կ'իջէ, չկրնար երբէք համոզուիլ թէ՛ Իզմիր համող կարգ մը ամերիկեան միսթոնարներ զոհ դասած չըլլան քաղաքս մէջ տարիներէ ի վեր գտնուող և մասամբ այլապետած տարրերու սխալ տեսութիւններուն, չգործածելու համար տարբեր բառ մը:

Եւ մենք վստահ ենք որ եթէ տեղս հասած քննիչ յանձնաժողովն և անոր յարգելի նախագահն անսառած քննութիւն մը ընեն և տեսնեն թէ՛ հայերու անուամբ ամերիկեան ստատաձեռն ազգէն գանձուած նուիրատուութիւններն, տարբեր նպատակներու գործածուած են ու կ'գործածուին, անմիջապէս հարկ եղած դարմաններն ի գործ պիտի դնեն, առաջն առնելու համար այս սխալ ուղղութեան:

Նմանապէս եթէ քննիչ յանձնաժողովն քննէ հիւանդանոցի հարցը և մանրամասնորէն պահանջէ վիճակագրութիւն մը, ցարդ դարմանուած հիւանդներն:

րու՝ ազգութեան տեսակէտով՝ և գիտէ թէ՛ հայերու թիւը աննշան եղած է և վերջերս գոյցողներն ալ գրեթէ ջիրաշահուելով և համոզուելով կ'տարուին հոն քանի մը որ մնալու և յետոյ ձուլու գրուելու համար, որպէսզի վիճակագրական ցուցակներու մէջ քանակութիւն մը երևի, սպասով ենք որ քննիչ յանձնաժողովն այս անցուցարածներուն տալէ պիտի ընդվզի և արմատական դարման մը ի գործ դնէ, որպէսզի Հայոց զէմ անիրաւութիւն մը տեղի չունենայ և ամերիկեան ժողովուրդը չգայթակղի, իմանալով որ իր միջնորդութեամբ տարիներու մէկ մասը կ'գործածուի տարբեր տարրերու և հաստատութիւններու համար:

Կ'սպասենք որ Տեղապահ Հայրը այս մասին լուսարանութիւն մը տայ իր ունեցած «սիրալիք տեսակցութեան» մասին Ամերիկ. քննիչ յանձնաժողովոյ նախագահին հետ:

Հ. Մ.

ՏԵՂԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ

ԲԱՆԱԲՕՍԱԿԱՆ

(Շօր. և վերջ)

Իտրեշքական սահղագործումի օրէնքը ինքնին հերքումն է, անշարժութեան անյղղութեան միջնորդութեան վարկածին: Ամեն ինչ տեղեկութիւն մէջ շարժած է ու փոխուած մինչև ցարդ, և այսուհետև ալ պիտի յարաբերուի ու յարաբերուի մշտնջենապէս:

Նիւթը արդէն ուրիշ բան չէ եթէ ոչ զանգուածային համագրութիւնը միջնորդութեան հիւնքերով՝ որոնք կը շարժին այնպիսի անընդունելի արագութեամբ մը որ մարդկային աչքը անշարժութեան պարտանքը կ'զգայ զայն գիտելով:

Տիեզերքը իր ծայրն մէջն է որ կը կրէ այն անխնայաբար հզոր ուժը որ մայրն է այս ներդաշնակ շարժութեան և փոփոխականութեան Պատահական, կոյր ուժ մը չէ այս, այլ երկրպագելիորէնի մաստուն ոյժ մը, որ նոյնքան հզոր իմացականութեան մը ստատաձեռնային գրոջը կը կրէ:

Բ. Արդի քրիստոնէական իմաստասիրութիւնը մենապաշտական է, և զայն կ'ընդունի:

Ինչ է մենապաշտութիւնը.

— Սրինոպոլի կողմէ հիմնուած վարդապետութիւն մըն է անիկա, որ կը հերքէ երկրութեան վարկածը, այսինքն, ոչ միայն տիեզերքն ու կեանքը չի բաժնի երկուքին, այլ նաև կընդունի նիւթին ու հողին անբաժան միութիւնը, ներկային ու սպագային անբաժանելի հանգամանքը:

Ըստ մենապաշտութեան, նոյն տարրը, նոյն մարմինը իր մէջ կը կրէ թէ՛ զօրութիւնը և թէ՛ իմացականութիւնը: Նիւթն ու հողին ի մի ձուլում են, իրարմով կ'ապրին, զիրար կը լրացնեն, իրարու կը ծառայեն, վերստ կ'արժեն. հողին ինչպէս քիչ տալ ալ ըսինք, նիւթին միջնորդութեան կ'արտայատուի: Աստուած ներքնապէս է տիեզերքին մէջ, և տիեզերքը Աստուծոյ մէջ:

Իսկ կեանք մի է, ներկան ու սպագան մի են. ներկան այնքան սուր է, այնքան թանկագին ու ցանկալի որքան սպագան: Ուստի հարկ չկայ մոլորութեան վրայ, անտաններու խորը վանքեր, մենաստաններ կանգնելու ու սպագայի պատրաստութիւնը տեսնելու մտքը. մեղ համար կենսական է սպորի մանուսնը շեղու իմացական ու հոգեկան կարողութեանց բովանդակ թափովը:

Մի՛ յուսահատիք տեսնելով շարժութիւնը՝ որ արդիւնքն է մարդկային տգիտութեան, անիկա անպայման տեղի պիտի տայ բարին առջև, որ նըպատակն իսկ է մարդուն ու տիեզերքին:

Կրնայ ըլլալ որ ուղիւստի մի աննշան կէտը պղտորի պատահական պատճառով մը, բայցայդ ազտը շուտով պիտի մարքուի բնութենէն որ համակարգութիւն է, համակ կեանք, ու ժըպիտ համակ:

Կան նաև քանի մը կարեւոր վարդապետութիւններ ևս որոնց համակրանքով կը հետեւի արդի քրիստոնէութիւնը ասոնքն են Գ. — Լոքի վարձապաշտութիւնը որ կը փոտարանէ այն սմին համոզում և հաւատալիքները՝ որոնք արդիւնքն էին մարդու փորձառական հետազոտութեանց կամ ուսումնասիրութեանց: Ըստ այս վարդապետութեան անհատին մէջ բարձրագոյն բանը ձեռնբերեցութեան ոգին է, այն ոգին՝ որ մեզ կ'առաջնորդէ գիտական պրպտութեան միջոցաւ մեր մէջ կ'զգանալու այնպիսի հզոր համոզում և հաւատքներ՝ որոնք տեղի չեն տար ոչ մէկ ոյժի կամ բնութեան առջև: Արդարև բարոյագետ նուիրական են այն բոլոր ձգտում և հաւատալիքները որոնք չեն միտներ ընդհանուր մարդկութեան կը շնորհակցան:

Գ. — Բանապաշտութիւնը որ փորձէն աւելի մոխն, բանաստեղծ կը վստահի, այն հոգին՝ զոր կը նկատէ իբր մէկ կայծը կամ ցուրցումը սատուածային իմաստութեան, այն բանաստեղծն որուն համայնապարփակ լոյսէն սուշնորդուած մարդ էակը կը յաջողի վերահաս-ըլլալ տիեզերական ճշմարտութեանց և իրականացնել հըրաշալի գիւտեր:

Քրիստոնէութեան ազգիկ ըմբռնումը, այսպէս ներդաշնակութեան մէջ է գիտական այս շորս մեծ վարդապետութիւններու հետ: Ան բարեշքութեան օրէնքին հիմնական կը նկատէ նոյն իսկ ինքզինքը:

Ստուգիւ նշանակելի սրբապետութիւններ տեղի ունեցած են մինչև այսօր բուն իսկ քրիստոնէական համոզում և գաւառանքներու մէջ: Դուրեւ ընթացքին ըմբռումի անապին տարրերութիւններ կրեան կեանքն Աստուծոյ, մեղքի, փրկութեան բանաստեղծութեան և գաղափարներու մէջ: Այս տարակարծութիւնները ծնունդ տուած են մէկ ակնի տիեզերական ժողովներու՝ որոնք բնութեաբանցած են այդ ըմբռում և գաւառանքներուն լուսազոյնները:

Սրդի քրիստոնէութիւնը գերազանցօրէն համակիր փորձապաշտութեան ընդհանուր վարդապետութեանց

ԹՈՒՐՈՒԹՅԱՆ ՊԵՅՅԵՆՆԵՐ

Իրիկանում առ է. գովիկ չունչ մը կը դեգերի մարգերուն ու ծաղիկներուն վրայ Երևանի կը թռչին, ո՞րը չըզիտեմ, թերևս անոնք կ'երթան արևէն խանձած գալկադէմ սպիտակ շուշաններուն քննելու:

Կանանչին վրայ նստած՝ կ'ըմպեմ անուշ հովիկը իրիկուան որ կը փայփայէ դէմքս՝ ու թախծոտ յուշեր կը բերէ ինձի թախիծներու երկրէն:

Մանուկ մը կ'անցնի քովէս, կը դիտեմ անոր դէմքը, աչքերը կը փայլին, արցունքով լեցուած են անոնք, ու կուլայ: Քիչ յետոյ խնդալով կ'անցնի, կ'երթայ:

Աչքերս գամուած կը մնան անոր ետեւէն ու խորհուրդներս կը կ'առնին այդ անձամբ մանկան անգիտակ արցունքին ու ծախտին: Կարծես խորհուրդաւոր պատկեր մ'ըլլար բոլոր երեւակալութիւնս բորբոքող: Ի՞նչ էր այդ պղտիկը որ անցաւ գնաց: Ինչո՞ւ կուլար և ինչո՞ւ կը խնդար:

Աչքերս փակելով կը խորհիմ թէ՛ անիկա համակ կանքն էր որ ծախտի ու արցունքի վազանցուկ տողանցումով մը կ'անցնէր կ'երթար՝ երագներու զերթ պատկեր մը խուսափուկ:

ՍՈՂՈՄԷ ՌԻՆՃԵԱՆ

Կրօնն է մանաւանդ խանդավառ հաւատքի այնպիսի հաւատքի մը որ անտեսանելիին կ'ձգտի և նուիրուի, հաւատքի մը՝ որ թեւեր կուտայ թռչելու դէպի նորագոյն հանգրուանները լուսոյ և ազատութեան: Արդի քրիստոնէութիւնը չի վարանիր հոշակելու թէ այն հասարակը որ հըռնէր չէ զարթոյն:

Փայլուն ու երանաւէտ ապագայ մը վերապահուած է մարդկութեան: Անուրանալի է որ անոր միտքը տակաւին իր մանկութեան շրջանին մէջն է, բայց այնքան խոր, այնքան բազմամարդ և անհուն է անոր իմացական ու հոգեկան ներաշխարհը որ ամենին չափազանցած չենք ըլլար ըսելով թէ, ան այսինքն մարդը իր ներկայ տրկար ու անկատար գործունէութեամբ, հազիւ թէ շարժման մէջ կը գնէ իր կարողութեանց թաքուն տիեզերքին ամենէն մակերեսային մէկ խաւը: Մարդկութիւնը պիտի աստուածանայ այն երանաւէտ օրը՝ ուր իր անդամները պիտի կարողանան օգտագործել իրենց ներաշխարհի բոլոր խաւերը անոնց ջնաշխարհիկ գամ ձերով:

Վերջացնելով կը կրկնեմ բարեշուք մի հասանքը, հասանքն է ժամանակին, հասանքը Աստուծոյ ուր կը մագլթեմ որ բոլորանուէր յանձնուի ներկայի Հայ երիտասարդութիւնը և ապագայ սերունդը, քրիստոնէական արդի անսահման հաւատքով և հրեղէն թռիչքով սլանալու համար միշտ դէպի կատարելութիւն, միշտ դէպի վեր, միշտ դէպի յառաջ:

ՕԿԵՆՅԵ

ԿՐՓՆՏՌՈՒԻ

Վերջինս Պերպերեան կը փնտռէ իր ամուսինը Լեոն (կաշկար) Իզմիրէն անձանօթ ուղղութեամբ գինւոր դրկուած: Իմացե՛լ Տ. Ղեւոնդ Քյ. Մաղիկեանի:

— Սֆրին Գարահիսարցի կարապետ փափագեան կը փնտռէ իր եղբայրը Գուրգէն, այնպէս ուղղութեամբ գինւոր գացած, 4 տարի է լուր չկայ:

— Շապին-Գարահիսարցի Մարիամ Յովէֆեան կը փնտռէ, Յովէֆե Շամ զինւոր գացած երկու տարի է լուր չկայ:

— Իոզդաուցի Ինճիրի գեղէն, Սարգիս Միթրաբեան կը փնտռէ իր եղբայրը Մովսէս որ Պարբէսէրէ Սոմա անցած էր: Իբր հացագործ զինւոր: Նոյն գեղէն Ատամարոյցի Աւետիս Միթրաբեան, Ամբրիկան վերադար-

ՀԱՅԵՐԸՆ ՄԵՋ

Երբեմն որքան կ'սխալու մարդիկ որքան ալ փորձու կարծուին, կուգայ վայրկեան մը որ խորհուրդ չէնք նման գետին կ'ուսպալի այդ փորձառութիւնն, խորին ապշութիւն մը պատճառելով ենթակային:

Ահա նմանօրինակ ապշութեան մը ենթարկուած եմ ժամանակէ մը ի վեր:

Նախ չուզեցի հաւատալ աչքերուս, յետոյ չուզեցի հաւատալ թերթերուն: Եղածը պարզապէս ոտնձգութիւն մըն էր, ինչ կ'ըսեմ բռնաբարում մը մեր իրաւունքներուն, մեր, այսինքն Հայոցս ըսել կուզեմ, ատանձնաշնորհումներուն, անա այդ պատճառաւ անիշխակ չկրայ համակերպիլ ու կատարուած իրողութիւններն նկատել ճշգրիտ եւ իրական:

Վերջապէս՝ այն պարսպապատ կարծիքն, համոզումն ու հաւատքն ունէի թէ՛ Հայոց ատանձնաշնորհումներուն, մենաշնորհներուն, ինչպէս կուզէք անուանեցէք, մաս, բաժին, անոր գոյութեան հետ սերտօրէն զուգորդուած, գրկելով խաւուած էր յանձնաժողովներ, մասնաժողովներ, յանձնախումբեր, մասնախումբեր կազմելու, ընտրելու, որոշելու կարողութիւնն ու մասնայատկութիւնը:

Արդ՝ ժամանակէ մը ի վեր ապշութեամբ կ'տեսնեմ թէ սխալեր եմ և այդ ալ մեր ձեռքէն խլուած իրացուցուած է:

Սակայն ամեն չարիքի տակէն բարիք կ'ծնի կ'ըսեն, մեր բարքերուն հետ զուգընթացաբար յարմարող այդ յանձնաժողովները մասնաժողովներն իրենց գոյութեան վայրկեանէն գիտէինք արդէն թէ ամբողջութեան դատարարուած կ'ըլլային, կ'ստորհիմ թէ՛ մեր ձեռքէն այդ մենաշնորհն խլուելով արդեօք արդիւնաբերութիւն և արգասաւորութիւն մը յառաջ պիտի բերե՞ն և այս կերպով անոնց վրայ մեր շինած յուր գաղափարը փոխեն:

ԵՍ

Մ Ա Մ ՈՒ Լ

ԹՈՒՐՈՒԹՅԱՆ ՄԱՍՈՒԼ

Քեռոյի հ'տեւելը կը գրէ Իզմիրի նկատմամբ— Իզմիր Տաճկաստանի սիրտն է, Տաճկաստան Իզմիրի շնորհի շունչ կ'առնէ: Իզմիր թուրքիոյ հիւնաքարն է. ծանրութեան կեդրոնն է. ախանալու թագն է:

Եթէ Իզմիրը փրցուի ու դորս հանուի, Անատոլիոյ ներքին մասերը չնչարկուելու կ'ենթարկուին, արևելքը կը խեղդէ զիրենք: Իզմիր անկարելի է որ Տաճկաստանէն բաժնուի:

Իզմիրի ազգային հանգամանքին նկատմամբ խոսք բնել աւելորդ կը սեպնք, վասնզի թէ բուն իսկ Իզմիր քաղաքը և թէ շրջակաները իսկապէս թուրք են:

Թուրք պատասխարութեան ամենուպորդ և ամենակարեւորն ապացոյցը երող լեզուի թոյլտուութեան հակառակ, յիշեալ տարրերուն բարքերուն ու սովորոյթներուն մէջ օտմանցիկութեան նմանողութիւն մը կայ:

Գալով երկրի տնտեսականին, կրնանք ըսել որ անոր հոգին թուրքին ձեռքը կը գտնուի, որ երկրագործութիւնն է: Հանքերուն մասին ալ նոյնպէս:

Յետոյ Իզմիրի էութեան տեսակէտէն գետ շատ աւելի կարեւոր բան մը կայ: Եթէ Գաղղիական դրամազուլումով մէջտեղ եկած գեղեցիկ քաղաքը բացառութիւն համարենք, մնացեալ մասերը թուրք գործաւորին շղուտ բազուկներուն արդիւնքը կը գտնենք:

Այս երկրին միակ արտագործը թուրքն է: Թուրքը այն ձմեռուան խիստ ցուրտին ու ամառը կիզիչ արեղակին տակ հողի հետ կը խոզայ թուրքը ինչպէս որ ամենամեծ ար-

տագորդն է: Ենպէս ալ ամենամեծ սպառողն է: Վասնզի թէ չտոյճախի մեծամասնութիւնը թուրք է և թէ տնտեսական գերազանցութիւնը թուրքին ձեռքն է:

Արտագրութեան ու սպառումի մէջ թուրքը այսպէս անորոշելի ըլլալով, վաճառականութիւնն ալ բառին բարձրագոյն իմաստով Անգլիացիներուն, Ֆրանսացիներուն և Իտալացիներուն ձեռքը կը գտնուի: Մնացեալները միշտորդի «Սըմարի» սատիճանէն անգին չեն կրնար անցնիլ: . . .

Այս երկիրը այսքան տարիներէ ի վեր իր խանդակաթ գրկին մէջ առանց ցեղի ու կրօնի խտրութեան առհասարակ բոլոր գաւակներն ալ երջանկացուցած ու իր շնորհաց սեղանէն աւանդուած ալ բաժին հանած է:

Եթէ կոյ երկիր մը՝ ուր փոքրամասնութիւնը մեծամասնութիւնէն չի ճնշուիր, ան ալ մերինն է:

Վերջը ըսուածներէն կը հետեւի որ 1. Իզմիր Տաճկաստանի սիրտն է: 2. Սար Վրայ հիմնուելով սիրտը մարմինէն Իզմիրը Անատոլիէն չի կրնար բաժնուիլ: 3. Բնակչութեան թիւի առեւելութեամբ Այստընի նահանգը թուրք է: 4. Տնտեսական գերազանցութեամբ ալ թուրք է: 5. Կալուածի և մշակելի հողի համեմատութեամբ ևս թուրք է: 6. Սակայն ճշմարիտ վաճառականութիւնը և ինչ ինչ արհեստներ օտարներու ձեռք են: 7. Միւսները թուրքին և թուրքին արտագրութիւնը գնող վաճառականին միջև «Միտնի» են:

Հետաւեալ Իզմիրի իսկութիւնը այսպէս ճշդելէ ետքը Անատոլի մէջ մեղի չափ տնտեսական յարաբերութիւն ունեցող եւրոպացիներուն դիրքին հետ հաշտեցնելու պայմանաւ Այստընի նահանգը՝ մեր Օգոստինոս կայսեր՝ բարձր իշխանութեան և Անգլիոյ ալ խորհրդակցական ազդեցութեան ներքեւ, օժտուած լայն իրաւասութիւններով ու վարչութեամբ և առանց թուրքիայէն բաժնուելու, քիչ ատենուան մէջ պիտի մտնէ անտարակոյտ յառաջդիմութեան ու զարգացման ճամբուն մէջ:

Մուսափաթ կը գրէ. — Չենք զիտիր տակաւին, թէ ինչ պարտաւորութիւններ դրուած են իւրաքանչիւր Օսմանցիի վրայ Հայրենակիցներ, ալ կը բաւեն անձնակազմութիւններն ու շահախնդրութիւնները: Ժամանակն է որ թողունք այլևս անձնակազմ կիրքերն ու ամենքս մէկ բոլորուինք մեր Սուլթանին շուրջ:

Ունինք բարի, խելացի, արդար ու անկեղծ թագաւոր մը, և տրամաբանական է արդեօք որ ներկայ տակաւին վայրկեաններուն մէջ կուսակցութիւններուն քաղաքականութեան հետեւինք:

Հ Ա Յ Ե Ր Ը
ՅԱՐՁԱԿԱՆ ՎՏԱՆԳԻՆ ՄԵՋ

ԻՐԻՏՈՒՆԿԱՆ ԳՈՒՆԴԵՐՈՒՆ
ԵՏ ՔՍԵՆՈՒԼԸ

Մ. Անէօրին Ուլիխիմ, երեսփոխանական ժողովին մէջ, հարցուց թէ ինչպէս բրիտանական ուժերը, ես քաղաքացան Անգլիոյ կառնէն, ինչ կարգադրութիւններ եղած են կանխելու համար զանազան ցեղերու մէջ հաւանական արեւնահոգումներ, ինչպէ՞ս Քիւրտները, Թաթարները, և Վրացիները կը պատրաստուին յարձակելու Երեւանի Հայ հանրապետութեան վրայ, ինչպէս Հայերը, պատերազմի մէջ մեր բարեկամները և զոյճ ըլլալով, իրենց ճակատագրին կը թողուին, ինչպէս Իտալական կառավարութիւնը ետ կառնէ իր գունդերը զրկելու խոստումը, և ի՞նչպէս Միացեալ Նահանգները ընդունած են ծանր մը այդ երկրամասին համար:

Մ. ՂԱՐՄԱՆ ՌԻՐՈԹՅ (փոխ. տեղնադիր արտաքին գործոց) ըսաւ թէ ինք միայն այդ խնդրոյն մասին ծա-

նօթագրութիւն մը ստացած էր, բայց ինք կրնայ վստահացնել ազնիւ պարտը թէ այս խիստ կարեւոր խնդիրը Բարիկ խաղաղութեան համաժողովին քննութեան տակ էր:

Մ. Ք. Ռ. Օ' Գոնըր. — Յարգելի պարտը Բարիկ իշխանութիւններուն պիտի հաղորդէ՞ սարսափի տիեզերական զգացումը որ պիտի զբոսուի հայերու դէպքին մէջ, որոնք իրենց ցեղէն շարքերով մէկ միլիոն հոգի կորսնցուցած են, տակաւին թոյլ տրուելով որ անոնք տառապին:

Մ. ՂԱՐՄԱՆ ՌԻՐՈԹՅ արդարեւ զայն պիտի հաղորդեմ մեր Բարիկ ներկայացուցչին:

ԼՕՐՏ ՌՕՊԵՐԹ ՍԷՍԻԼ, կառավարութիւնը ունի՞ր ու է յոյս թէ կարելի է ընել սէ է բան այս յուսահատ ժողովրդին և թէ մեր պարտաւորութիւնը անոր հանդէպ այնքան զորաւոր է որքան զօրավար Տէնիքին կամ Ամիրալ-Քոչարը:

Մ. ՂԱՐՄԱՆ ՌԻՐՈԹՅ Ես բոլորովին վստահ եմ թէ կառավարութիւնը նկատի պիտի առնէ բոլոր ատենը:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՆԵՐ

ԻՏԱԼԱՎԱՆ Թերթերը կը հրատարակեն, Բարիկ գտնուող յոյն արտաքին գործոց նախարարին հետեւեալ հեռագիրը, Հուովի հելէն դեսպանին ուղղեալ Ռուսիս եւ ձեռ տեղեկացնելու թէ, Պ. Վէնիզէտի և Թիթիօնի միջև քանի մը օրէ ի վեր կատարուած բանակցութիւնները յանգած են համաձայնութեան մը, որու մէջ իտալական և յունական բոլոր հարցերը քննուած են և որոշուած է այս հարցերը ներկայացնել համաժողովին փոխազարձ հաշտարար ոգիով մը: Այս համաձայնութեան շնորհիւ երկու կառավարութիւնները ասկէ վերջ կատարեալ ներաշխարհակցութեամբ պիտի ընթանան:

ՊԻՐԻՔՍԵԼԷՆ կը հեռագրեն թէ Պեռնիոյ արքայական ամուլը Սեպտեմբերին սկիզբը պիտի մեկնին Մ. — Նահանգները:

Վիլնի, Ե. Նիւ-Զ. Ի տեղեկութեանց համեմատ, քայքային դատաւարութիւնը՝ հաւանական է որ տեղի ունենայ Համաժողով-Քուրդի մէջ, Լոնտոնի մօտ Վիլնիւմ Բ. պիտի արգելափակուի, Համաժողով-Քուրդի պալատին մէջ յարկաբանին մէջ:

ԼՕՆՏՈՆԷ կը հեռագրեն թէ զինւորական օդանւորութեան ճիւղին մէջ եղծարարութիւն մը երեւան ելած է ուր կարգ մը ձեռարկուներ մեծազուտար գրամներ շորթած են:

ՇԻՔԱԿՕ - ԹԻՐՊԻՒՆ կը գրէ թէ Ֆրանսայի մէջ այժմ կը մնան մօտաւորապէս 100.000 զինւոր:

ՄԻՐԱԿՈՒՏԱԿԱՆ ԼՕԾ, ըսած է որ նախագահ Ուիլսոն կեանքի սրբութիւնը պատրուակ ընելով շատեր յորդարած է ինպատակ զանազան և այսպէսով իրեն կապած է բողոքական հանրապետական (լօճի կուսակցութիւնը) ձեռակուտականները: Ուրիշ նիստի մը մէջ յայտարարած է մեծապէս փափաքելի է որ, դաշնագիրը որքան կարելի է շուտ վաւերացուի, անիկա ձեռակոյտին բաղձանքն է առանց կուսակցական խտրութեան:

«ՌՈՒԹԻՔԷՆ» դանիական թերթը կ'անդեկագնէ թէ՛ Օգոստոս Գի առաւուսուն ջրասաւառնակ մը ծովակին

վրայ, մինչև 200 մէթր իջնելով վար կը նետէ երկու ծրար, հոն սպասող այր մարդու մը և կնոջ մը, իշխանութիւնն կ'ստիպուի ձեռքակալած է զանոնք։ Մարմնը կ'սպառնալին թանկարժէք զոհարեղէններ, ալիսը, զէնք, ոսկեայ և արծաթեայ սպասներ և այլն։ Այդ զոյգը խոտովանած է թէ այդ հարստութիւնը Սաքսի արքայական տան կ'վերաբերի և թէ իշխան վիտ, անձամբ կը վարէր այն մաքսախուզութիւնը, ինքը ըլլալով օգանաւորներէն մին Դանիական թերթը կ'աւելցնէ թէ՛ Պերլինի կառավարութիւնը կորովի միջոցներ ձեռք տուած է արգելելու համար Գերման հարուստներուն, որ իրենց հարուստութիւնները արտասահման չվտարարեն։

ԱՐՇԻՂՈՒԳՍ ԶԺՅԵՔԻ տեսակցութեան մը մէջ յայտարարած է թէ, հունգարիոյ ներկայ կացութիւնը ճշգնաթմային է, Ռումանացիք կ'ստեղծուցած են շոգեկառքերու երթելակութիւնը, խզած են հեռագրական, հեռաձայնական հաղորդակցութիւնները, և այսպէսով արգելք կ'ըլլան որ ուսեստեղէնները չհասնին Պուտոբէշը, նոր կառավարութիւնը ուսմանացիներուն հետ բանակցութիւններու ճշգիրտ մտնէ, սակայն ան, վստահութիւն ունի համաձայնութեան վրայ։

ԼԻԻՍԵՐՆԻ մէջ գումարուած ընկերվարական համաժողովը շարք մը որոշումներ տուած է, որոնց մէջ կան նաև հայկական շարդերու դէմ որոշումներ։

Տեղական Լուրեր

ԵՐԱՇՏԱԿԱՆ վարժարանի մը հիմնուելը կ'տեղեկանանք մեծ զոհանուկութեամբ իզմիրցի արուեստագիտուհի Օր. Հեյլէն. Իճիրթիտիս վերադարձած է Ամերիկայէ և Նախկին շրջանաւարտ Իտալիոյ Գեղարւեստից ուսումնարանէն, վերջին 12 տարիները պաշտօնավարած է Մ. Նահանգացի գումազան վարժարաններու մէջ, իբր քաջ երաժշտուհի, ուր մեծ համբաւ ստացած է։ Օր. Իճիրթիտիս մտադիր է իզմիր հաստատուել և կազմակերպել երաժշտական դպրոց մը, ուր պետի աւանդէ դաճնակի և երգի գասեր կ'գնահատենք Օր. Իճիրթիտիսի այս գիտաւորութիւնը, երբ նրկատի ունենանք թէ պատերազմի միջոցին քաղաքս զրկուած էր երաժշտական դպրոցէ մը և յաջողութիւն կը մտայնենք։

ՎԵՂՈՒՑ Յանձնախումբը. հետ եւեալը կը ծանուցանէ. - Վնասող օտարակազմակերպը իրենց խնդրանքները պէտք է յանձնեն տեղա հասած համաձայնական յանձնախումբին, Ժ. 5-7 (Կ. Վ.) Հօնիւր Ֆէրիսանէին մէջ Անգլիական առեւտրական սենեակը ուր կը գտնուի յանձնախումբը։ Հարկ եղած պարագային և նախապէս սրոշուած ժամանակին պէտք է ներկայացընել վկաները և վաւերացուած փաստեր։

ՔԵՅՈՒՆԻ կը գրէ թէ, թուրք յանձնախումբը, Պերկամա և Սոմա այցելելով խորհրդակցութիւն մը ունեցած է շրջակայքերու աւագակախումբերուն հետ Յանձնախումբը ջանացած է զանոնք համոզել, խրատելով հնարանդութիւն։

ՀԱՆՐԱՅԻՆ առողջապահութեան տնօրէնութիւնը հետեւեալը, կը ծանուցանէ. - Վերջին 24 ժամուան ընթացքին իզմիրի մէջ պատահած է թիֆուսի 1 դէպք։

ՄԱՍՈՒԼԻ ՎԱՅՈՒՐՈՒՄ նաւը Սելաթիկէն բերած է 1650 հակ ճերմակեղէն և 600 զոյգ կօշիկ, բաժնուելու համար իզմիր սպասարանող փոխտուկաններուն։

Հեյլէն իշխանութիւնները ասկէ առաջ ազատ արձակած էին ի իրի քաղաքացիներ Պարճր գասէ Իրկու սէյր, սակայն նոր հրամանի մը վրայ կորկին ձերբակալուելով բանտ տուալնորդուած է։

«ՎԻՔՕՐՈՒՄ» անդր. նաւը երեկ քաղաքս հասնելով, իր հետ բերած է, իզմիրի հրապարակին համար, 1000 թօնօ զանազան ապրանքներ, (կերպաս, շաքար, սուրճ, երկաթեղէն, և այլն)։

Հեյլէն գրաւման բանակի հրամանատար գոր. Նիտէր ասլի օր այցելուութիւն տուած է կուսակալ Իզգէթ Պէյի։

ՄՈՒՇԻ ԽԱՍ ԳԻՒՂԷՆ ԱՂՏՈՒՍՆԵՐՈՒ ՅԱՆԿ

Տեղա բնակող մշեցի Պ. Գոսպար Տակառեան փափաքելով իր հայնսկիցներէն ուղեբուռն մանրամասն ցուցակը ունենալու, գրում է Պ. Միսաք Պրտէճեանի որ անձամբ ենթարկուելով մեծ եղեւնի պատուհասին մազապուր ճողպուրած և Պոլիս հասնելով հաճած է հետեւեալ ցանկը դրել։

1. - Տիւր տունէն, որ կը բաղկանար 25 հոգիէ, ազատուած են Մէլոն, Սարգիս, Սէրոբի տղան Սանթրոն, Հըլլաթ, և Միւս կին։
2. - Սալվարի տունէն, որ կը բաղկանար 20 անդամէ, ազատուած են Յովհաննէս, և իր տղաքը Տիգրան և Լեւոն։
3. - Պօլէ տունէն, որ կը բաղկանար 18 անդամէ, ազատուած են խթունի տղան Արմէն, Վահան, Նիքոնի կին Մաքրուհի և Պատոյ կինը Պըշոյ և տղան Համբարձում։
4. - Մուրաթ տունէն, որ կը բաղկանար 30 անդամէ, ազատուած են, Ալտուրի կին, Ջմիրլատ, աղջիկը Անգին, Օհանի տղայ Գէորդ, և հաճող աղջիկ Հայկանուշ։
5. - Փարէզի տունէն, որ կը բաղկանար 40 անդամէ, ազատուած են, Գասպար, Սէրոբ, Գեղամ, Նոյեմզար, Ազիւ, Սալվի, Հայրոյ աղջիկը Մովսիս։
6. - Բամպուկի տունէն, որ կը բաղկանար 15 անդամէ, ազատուած են Վահան, Մեղայ տղայ Գէորդ, Արփոյ տղայ Ազատ և Վաղարշակ։
7. - Նորոյ Տունէն, որ կը բաղկանար 20 հոգիէ, ազատուած են Տոնոյ տղայ Գարամ, Դուկոյ տղայ Գեղամ և Հրանդ։
8. - Գոզկայ տունէն, որ կը բաղկանար 20 անդամէ, ազատուած են Համբարձումի տղան և Գոչէ տղան Միսակ և աղջիկ Պայմառ։
9. - Գրքոյ տունէն, որ կը բաղկանար 18 հոգիէ, ազատուած են Գաւրիթ և Մառթէոսի տղայ Հմայնակ։
10. - Ռուսի տունէն, որ կը բաղկանար 15 անդամէ, ազատուած են, Վարդանի տղայ Արմէն։
11. - Ռափայէի տնէն, որ կը բաղկանար 25 հոգիէ, ազատուած են Սեղրաք, և Մարգարի տղայ Արիստակէս, Յակոբի տղայ Արսէն և Խալօ աղջիկը Ազնիւ, Գոչէ տղան։
12. - Մասրոյ տունէն, որ կը բաղկանար 15 հոգիէ, ազատուած է Մանուկի կին Գինոն։
13. - Հեկոյ տունէն, որ կը բաղկանար 27 հոգիէ, ազատուած են, Սիւմայ տղայ Ասոն և Գորքի աղջիկ Մազո։
14. - Գասպար Տակառի տունէն, որ կը բաղկանար 24 հոգիէ, կարոյ տղայ Միսիթար, Միսակի տղան Գեղամ։
15. - Հաքո տունէն, որ կը բաղկանար 12 հոգիէ, ազատ է Բէմեան։
16. - Հովի Քրքոյ տնէն, որ կը բաղկանար 12 հոգիէ, Օհան միայն ազատուած է։
17. - Պողոսի տնէն, որ կը բաղկանար 25 հոգիէ, միայն Ղաղարի կին Բէհան։

Ազգային Անցուդարք

Քաղ. ժողովը իր շարժական նիստը գումարած է նախագահութեամբ Առաջն. Տեղապահ հօր. Ներկայ գտնուած են Պ. Պ. Մ. Մոսաքեան, Յ. Հարենց, Վ. Էյմասեան, Ս. Պաքրճեան, Յ. Կիզէլեան։

1. Տնտեսականի անդամներու թիւը որոշուած ըլլալով բարձրացնել ընտրուած են Պ. Պ. Յովհ. Մանրեան և Սարգիս Գըլըճեան։
2. Նպատաւարաշխ յանձնաժողովը ինչպիսիք է 2000 ոսկի տարապիտոյ պէտքերուն համար, որոշուած է գրահացում տուր։
3. Ազգ. խնամատարութեան կողմէ իզմիր դրկիլ առաջարկուած կետարկոյ որբերու մասին, որոշուած է պատասխանել թէ անմիջապէս որ չէնք պիտի գտնուի, պիտի տեղեկացուի։
4. Ընդունուած է Պ. Պ. Ներսէսեանի և Տ. Տոնիկեանի Ուսումն. Խոր.

հուրդէ հրաժարականները և որոշած նարերու ընտրութեան։

5. Պ. Գորգոր Քրքոյէի հայաստահաւք և նպատաւարաշխ յանձնաժողովներէ, մեկնումի պատճառաւ հրաժարած ըլլալով, ընդունուած է անոր հրաժարականը։
6. Էտէմիշի մէջ սպաննուած հայու մասին դիմում եղած ըլլալով համաձայնական ոյժերու վերին խումբնատարին, խոստում առնուած է պէտք եղածն ընելու։
7. Պատրիարքարանէ մեծ հանգանակութեան գործածութեան եղանակի մասին տեղեկութիւններ ուղղուած ըլլալով, որոշուած է հարկ եղած բացատրութիւնները հաղորդել։
8. Նպատահաւար յանձնաժողովը տեղեկացուցած ըլլալով որ յանձնաժողովէ շատեր հրաժարած են և առանց զանձապետի մնացած են որոշուց գրել որպէսզի յարմարագոյն անդամներ ներկային հրաւիրելու և յարմար զանձապետ մը ընտրեն։

ՎԵՐՋԻՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

Կ. Պոլիս 28 Օգոստոս 1919

ԶՕՐ. ՀՐՊՊՕՐՏ ԿԱՌԱՎԱՐԻՉ

Ամերիկա Հայաստանի յանձնառութիւնն ստանձնելու պարագային Զօր. Հրպարտ Հայաստանի կառավարիչ պիտի անուանուի։

Մ. ԲՈՒԱՆԳԱՐԷԻ ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆԸ

Յրանաչի հանրագիտութեան նախագահը վերադարձած է դէպի Ալզաու-Լօրէն իր ըրած ուղեւորութենէն։

ԶՕՐ. ԲԷՐՇԵՆԿ ԵՒ ԻՏԱԼԱԿԱՆ ՃԱԿԱՏԸ

Ամերիկեան զօրաց ընդհանուր հրամանատար Զօր. Բէրշինկ յայտարարած է թէ իտալական ռազմաճակատը այցելելու առթիւ հասու եղած է այն անհուն զժուարութեանց, որոնց յս դիմել ստիպուած է իտալական բանակը չնոսրել իր արժանիքին։

ՓՐԱՆՍ. ԾԵՐԱԿՈՅՏԻՆ ՄԷՋ

Յրանա. Ծերակոյտին արտաքին յանձնաժողովը տեղեկացաւ նախարարապետ Մ. Քլէմանսօի մէկ տեղեկագրին, որ մանրամասնութիւն մըն էր հաշտութեան բանակցութեան նախապատրաստական գործողութեանց, որոնք առաջնորդեցին հաշտութեան կնքումին Բանասուր իր բանախօսութեան պահուն հարցապնդումներ ունեցաւ, որոնց ամենքին ալ գոհացում տուաւ։

ՈՒԷԼՍԻ ԻՉԼՍՆՆԻ Ի ԳԱՆԱՏԱ

Հայրիփաքսէ կ'տեղեկացնեն թէ՛ Ուէլսի իշխանը «Քալուր» նաւով մասնակցած է Գոնատական հանդէսներուն Այցելած է մարտանաւը և ջերմօրէն տեսակցած սպաներու հետ։

ՊՈՒԼԿԱՐԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՈՒՄՆԵՐ

Արմանահաւատ աղբիւրներէ հասած լուրերու համեմատ, Հաշտութեան Համաժողովին պուլկար պատուիրակները երկու նոր պաշտօնագրիներ յանձնած են բարձրագոյն խորհուրդին։ Այս պաշտօնագրիներէն մին կ'ընդօքէ սերպ կառավարութեան նորանոր հողամասեր ստանալու միտումին դէմ, սերպօպուլկար սահմանադրիւն վրայ նրկորդը կ'սահմանէ պուլկար գերիներու արձակումը որոնք կ'մնան զինադադարէն ի վեր Գեռ յայտնի չէ թէ ինչ ընթացք պիտի բռնէ Հաշտութեան Համաժողովը։

ՄԱՐԱՂԱՍ ԱԼԵՄՈՒ ԵՒ ԻՏԱԼԱՑԻԲ

«Մաթէն» կ'ծանուցանէ թէ՛ Պաղեստինի իտալական զօրաբաժնին դէպի հայրենիք մեկնումին առթիւ՝ որոյ յանձնած էին անպիտական իշխանութիւնք Նաֆաի մարզին հսկողութիւնը, մարաջախտ Ալէմպի, Արեւելեան Ասիոյ համաձայնական ոյժերու ընդհ. հրամանատար, իր զոհուակալութիւնն յայտնած է հետեւեալ հեռագրով։

«Այն պահուն որ իտալական զօրաբաժնին կ'թողու Պաղեստինը պարտ կ'իզգամ անորմէ շնորհակալ ըլլալ այն հիւանալի կարգապահութեան զօրաւոր ուղիին համար, որ ձեր զօրքերը ցոյց տուին Պաղեստինի պատերազմներուն մէջ, Բարի յաջողութիւն և ցտեսութիւն։»

ՌՈՒՄԱՆԻԱ ԵՒ ՀՈՒՆԳԱՐԻԱ

Հաշտութեան Համաժողովը որոշած է Ռումանիոյ՝ Հունգարիայէ ստանալիք տուգանքը։

ՌԻՔՐԱՆԻԱ ԵՒ ԻՏԱԼԻԱ

Քիէլէ կ'հետադրեն թէ՛ իտալիոյ միջնորդութեամբ Հաշտութեան Համաժողովը հուանութիւն տուած է որ Ռաքանիոյ կողմէ պատուիրակ մը երթայ Բարիք Ուքրանացոց ազգային լաղձանքները ներկայելու համար։

ԱՌԷՆՔՈՒ ՆԱԽՈՐԴ ԴԵՍՊԱՆԸ

Աթէնքի նախորդ օսմանեան դեսպան Հալիպ պէյը յատուկ պաշտօնով իտալիա մեկնած է։

ՊՈՒԼԿԱՐ ՀԱՇՏՈՒԹԻՒՆԸ

Մ. Վէնիզէլոս Բարիզին կ'տեղեկացնէ թէ՛ մօտիկ ս պուլկար հաշտութիւնը կնքուելով, անմիջապէս պիտի վերադառնայ իթէնք։

ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻՒ ՎԱՐՉՔԸ

Նոր օրինակի մը ներկայացուած է Սուլթանի վաւերացման, որով պիտի արտօնուի կին վարձքերու վրայ կրկին յաւելում մը։

ՄԵԾ ՊԱՆԳՐԻԿ ԵՒ Ս ԶԻՐԱՆ
ՄԻՋՍԶԳ. 3-Ն
Թ Ա Պ Ա Ն Ա Ա Ն Է Փ Ո Ղ Ո Ց
Բարձրագույն Երկրաչափական
Յարգող յանձնարարական ամեն տեսակ
հանգստություններ և միջոցները նկատի
առնելով, մարդու և նոր անկողին և
մահճամասերով կանաչություն, մաս-
նաւորներու և ընտանիքներու սեն-
եակներ պատրաստուած են
Յիճիքիս հոշակաւոր օդին և այլ
ըմպելիքներ ու համեղ մէկերնէր, շատ
պատուական թէմպէքիէ կլկակ և մա-
քուր սպասարկութիւն:

Ամուրիներու վարձու սենեակներ
Պատուաւոր և գործաւնեայ սպա-
սուհի մը կ'ուզուի:

Տարբեր-Յիւն
Մ. ԲԻՐԻՆՃԵԱՆ ԵՒ ԸՆԿ.

ՏՐՔ Ս. Խ. ԺԱՄԿՈՉԵԱՆ
Վ. Իրարոյց և ակնարկ
Ընդուն

ԱՍԵՐԻԿԱՆ ՄԵՐԻԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԵՆ
ԵՒ
ԼՈՆՏՈՆԻ ԱՐՔ. ԱԿՄԱՐՈՒԺ. ՀԻՆԵԼԳՆԱՆՈՅԵՆ
Թեմքե ու ծանր ամէն տեսակ վիրա-
բուժական գործողութիւններ կ'կատա-
րէ կանանց և այրերու:

ԱՉՔԻՆ ՎԵՐԱՌՈՐՈՒԹՅԱՆ
գարմանուներ և գործողութիւններ,
ինչպէս նաև գիտականօրէն ակնոցի
չափեր կ'որոշէ:

Իրսէն գալիք հիւանդներուն մաս-
նաւոր կարգադրութիւններու:

Հիւանդներ կ'ընդունուի, բացի կի-
րակիէ, ամէն օր կ. ա. ժ. 9-12
կ. ե. ժ. 2-5 իր բնակարանը Բէշիտի
ձառտէ թիւ 40 (Պ. Պալաքճեանի տունը):

ԹԵՆՈՐՈՐՈՍ ԲՍԱԽՆՈՒՏԻՍ
ՋՐԱՐՈՒԺԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ
ԵՒ ԲԱՂՆԻՔՆԵՐ
Ջրաբուժութիւնը մորթը կը մաք-
րէ, արտաշնչութիւնը կ' զխրացնէ,
արեան շրջանը կը փութացնէ և մարմ-
նոյն անգամայոյժ մասերուն ոյժ և
առողջութիւն կը պարզէ:

Լոգանք ծծմբային
» պարէզ } Բիւնաթիզմի հմբ.
տաք և պաղ սուշը կիներու և այ-
րերու համար առողջութիւն է:

Բէշիտի ճառտէսի նոր փոսն դէմ
Յընարք փողոց թիւ 19-32:

Հազար Ֆրանք տուժելու պատ-
րաստ է, եթէ հաստասել յաջողին թէ
փնտասակար է առողջութեան համար
սուշը:

ԼՈՒԻ ՊԱՐԹՈՒԻ ՏԵՂԵԿԱԳԻՐԸ
ԳԵՐԹԱՆ ՀԱՇՏՈՒԹԵԱՆ ԴԱՇՆԱԳՐԻՆ
ՊԱՏԱՍԻՆԱՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՆՔՆԵՐ
ԵՒ ՀԱՌԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՆՔՆԵՐ
Գերման պատուիրակութիւնը այս
երկու հեռագրիներուն տմբասանիչ
ուժը զգաց. անոնք դաշնակից գեւ-
պանէ մը կը բղխէին, որ ուղղակի ին-
րեան կը հանէր Պեռլինի կատար-
ութեան ներկայացուցիչներ, և անոնք
որ մտատանջութեան մէջ էր տեսնե-
լով որ Աւստրո-Հունգարիոյ տկարու-
րութեամբ, կամ Մերպիոյ համակեր-
պութեամբ ձեռքէ փախցնելու վրայ
էր պատրաստ մը և առիթը, որուն
կ'սպասէր եղբունական անկուշտ ազա-
նութեամբ:

Պատուիրակութիւնը այս մասին
խորհուրդ հարցուց Պէթման չօրվէկի
և Մակոյի, երկու «արժանահաւատ
անձեր», իր իսկ խոստովանութեամբ,
որոնք շատ տկար և յետամնաց հեր-
քուժմը տուին կոմս Յէօկէնի վկայ-
ութեան, որ հաղորդուած էր նոյն իսկ
զէպքերոյ ընթացքին ատենն Ուրիշ
բան մը պէտք էր ընել. գերման պատ-
ուիրակութիւնը, ոչնչացնելու համար
սոյն վկայութիւնը, վկային մտաւորա-

ՏՊԱՐԱՆ ԱՐԱՄԵՐԵԱՆԻ
ՀԵՄՆՈՒԹ 1889ԾՆ

ՏՊԱՐԱՆԻՍ ԵՂ Կը տպագրուին գրքեր, գրքոյներ, տետրակներ, յայտարարու-
թիւններ, հարսանեան հրատարակութիւններ, զեկուցատուներ ու մահագրներ են:

ՏՊԱՐԱՆԻՍ ԵՂ Կը տպուին նամակագրութիւններ, պահարաններ, հարկեցուցակ-
ներ, ընկալագրեր, վերջապէս վաճառատան մը վերաբերեալ ամեն տեսակ
տպագրական գործեր:

ՏՊԱՐԱՆԻՍ ԵՂ Կը տպուին տեղեկագրիներ, երկնայիններու նամակ-հրատար-
արներ տոմսակներ և վերջապէս տպագրական արհեստին վերաբերեալ ամեն
տեսակ գործեր:

Ամեն լեզու: ՀԱՅԵՐԵՆ, ՖՐԱՆՍԵՐԵՆ, ԱՆԳԼԵՐԵՆ, ՅՈՒՆԱՐԵՆ, ՔՈՒՐԴԵՐԵՆ

ՏԵՍԱԿՆԵՐՈՒ ՊԵՍՈՒՍՈՒԹՅԱՆ
ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԳՈՆԵՆՔՈՒԹՅԱՆ
Մանր և խնամեալ գործ օրուան գիներու վայ
Տպարանս թաց է առատօճ միջնէր կես գիշեր
խնդրակներու հաւար

Վ Ճ Ա Ր Ս Ո Ւ Ն Ք Կ Ա Ն Խ Ի Կ

„ԱՐԵՒԵԼԵԱՆ ՄԱՄՈՒԼ“

Թերթիս ծառայը առելի ընդարձակուած ըրալով, այժմ ի վի-
ճակի եւ՛ի առելի շայն տը մը տալ ծանուցմանց թաժնին, լոյնիսկ
էրէ ամեն օր հարկ ըրայ միւլենոյն ծանուցումն կրկնել, ինչ որ
սակից առայ ի վիճակի յի ինք ընելու:

Գոհացուցիչ պարտականութիւն կաւ մե՛ծ, մէկ կաւ առելի ծա-
նուցմանց հաւար:

Գիւնուներ կ'ընդունուին առտուրէ միւլեն կես գիշեր:

Կ Ա Ն Խ Ի Կ Վ Ճ Ա Ր Ո Ւ Ս

COMERCIAL UNION ASSURANCE LTD.
FIRE & LIFE
ՄԵԾ ԱՊԱՆՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿ.
ՍՏՈՐԱԳՐՈՒԹ ԴՐԱՄԱԳԼՈՒԽ L.S. 2.500.000
ՏՐԱՄԱԴՐԵԼԻ » » » 2.250.000
ԱՆԳԼԱԿԱՆ ՈՍԿՈՎ ՎՃԱՐԵԼՈՒ ՊԱՅՄԱՆԱԻ
Կ'ապահովագրէ ամեն տեսակ ապրաս, եւ կարամժ
Ընդունուր գործակալ
ՍՊԱՐԹԱԸ ԵՂԱՐՔ
ԱՍՐԵԱՐ ԴԵԱՐՈՒ

ՊՅՈՒՆԱՆ ՎԱՐՃԱՐԱՆ
ԻՆՇՈՒՆԻՆ ԵՒ ՅԵՐԵԿԵԱՅ
Տ Ր Ք Ա Ն Ց .
Ազգային հիմնական դաստիարակու-
թիւն, շեղուղիական եւ տնտեսական
խնամեալ պատրաստութիւն (մասնա-
ւոր եղանակով կ'ուսուցուին Յը-
րանեակն, Անգլիեակն եւ Յունեակն
լեզուները):
ՎԵՐԱԲՈՒՍ ՅԱՌԱԶԻԿԱՅ ԴԵ. (3 ՍԵՊ.)
Գասերը կ'ակնարկուին օրն օրն իսկ
Երազրի և ընդունելութեան պայմանումը
համար գիւնը անօրէնութեան, Յուստիէ (Ազրա-
նայ) փողոց, թիւ 16:
Առաւօտներու ժամը 9-12

ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿ Է
ՇՈՒՏՈՎ ԼՈՅՍ ԿԸ ՏԵՍԵՆ
ՎԱՐԴԳԵՍԻ
„ՄՏՔԻՐ ՈՒ ՊԱՏՆԵՐՆԵՐ“
Վ Ր Ք Ո Ց Կ Ը
Դ Ի Ն 15 ՂՐՇ.

„Ջ Ա Ր Ք Օ Ն Ք“ Ի
ՎԻՃԱԲՆԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ
«ՋԱՐԹՈՆԻ» լսարանական միւլ-
թեան վրձարան. Ժողովը տեղի պիտի
ունենայ այսօր 28 Օգոստ. ժա-
մը ճիշդ ութին (Վ. Ա.) Հոլիպոլիտան
սրահին մէջ, նիւթն է ՋԹ-նուհայան
որտէ կ'ընտանուր հայկական իրական-
գործող կարէնէ՛ք եւ որդի-ընտան

ԳԻՆԵՐԱՅԻՆ ԿԱՆԿԱՐՈՒ ԳԱՐԵՆԹԱՅԻ
ՍԿԱՆԱԼ ՕԳՈՍՏՈՍ 15 ԷՆ
«Ջարթոնք» լսարանական. Միւլ-
թեանը կարմակերպած է Գիշերային
դաստիարակութեանց շարք մը՝ Անգլիեակն,
Յունեակն, Հայերէն լեզուներու, ինչպէս
նաև Թատարական Տատարական-
եւ Իրանական Մանուկներն' իստ
գիւրամատչելի պայմաններով
Հեռուի փոխադրուներ այժմէն գի-
մէն Պ. Նշան վարդանեանի, Եկեղեցւոյ
գիւմար Պ. Կ. Պալապանեան վաճառա-
ունը:

ՏՐՔ. Յ. ԴԱՐԱՆԵԱՆ
Մ Ա Ս Ն Ա Գ Է Տ
ՆԵՐԻՆ, ԿԱՆԱՆՑ ԵՒ ՏՂԱՅՈՑ
Հիւանդաբուժներու
Հիւանդ կ'ընդունի բացի կիրակի
ամեն օր. Առաւօտ ժամը 10-
12 ին եւ կ. ետը 3-5.
ՊԱՏՅՈՒՍԵՂԻՆ.— Հայոց բաղ Մոսկ
փողոց թիւ 32:

կան խանգարումը առայ ըրած, և
պարզ անտարբերութեամբ մը տեւ-
ցուցած էր թէ «Աւստրո-Հունգարա-
կան դեպքերը իր տարբերութեան առելի
ծեր էր»:

Ի գործողութիւն Գերմանիոյ,
Պեռլինի կատարութեան դէմ կը
ցցուի ուրիշ վկաներ, որոնք 1914էն
սկսեալ, առանց կոմս Յէօկէնի կող-
մէ հաղորդուած կարծիքին տիպակ
ըլլալու, միւլենոյն զգացումը կ'ար-
տայոյնին հաւասար ուժով: Յուլիս
18ին, Պալապանեան նախարարակալուր,
այլ ևս ո՛չ իբր դաշնակից, այլ իբր
բուն իսկ գերմանացի, Միւլինի կա-
ռավարութեան կը տեղեկացնէր Պեռ-
լինի մէջ տիրող մտային վիճակը՝
Յիմմէրմանի հետ տեսակցութեան մը
եաքը, որ այն ատեն այսպէս զոր-
ծոց պաշտօնատան մէջ պետական փոխ-
քարտուղար էր:

«Ինչնայ դաշնակից» Պէլրատի
մէջ կատարելիք զինուոր որ ծանու-
ցագիր մը ըրելու մէջ կը կայնայ,
տեղի պիտի ունենայ ընթացիկ ամսոյն
25ին: Սոյն գործողութեան միւլեն
ցարդ յապաղելուն պատճառը այն է
որ կը փախաբն սպասել Բուսնիա-
րէի և Վիլիանի Փեթրպպոլիէն միւլ-
նելուն, որպէսզի երկուս կատար-
ութեանց համար գժուարացնեն որ
ևէ համաձայնութիւն: Միւլեն այն
ատեն վիլենայի մէջ խաղախրական

զգացումներու երեւոյթ մը պիտի տան
ինքնաբերաբար արձակուրդի ենթա-
կելով արտաքին գործոց պաշտօնեան
և ընդունուր սպախոյսի պետու: Աս-
կէ զատ, ոչ նուազ յաջողութիւն ՚ի
գործ գրին մամլոյ և սպարանի վրայ:
Հոս ընդունուած է թէ՛ այս տեսակ-
տով վիլենայի դաշնակց ճարպիկու-
թեամբ գործոց. կը ցաւին միւլեն որ
Թիցոս կոմսը, որ սկիզբները ընդգիւմ-
ցած էր բուն գործողութիւններու,
պատգամաւորաց ժողովին մէջ իր ը-
րած յայտարարութեամբ վարագորին
մէկ ծայրը բացած էր:

Յիմմէրմանի ըսածին նայելով,
ճանուցագիրը հետեւեալ պահանջները
պիտի պարունակէ.
«1.— Սերպիոյ թագաւորին կողմէ
յայտարարութեան մը հրատարակումը,
ճանուցանելով թէ Սերպ կատարու-
թեան մը անոր դատարարութիւնը չէ:
«2.— Սերպիոյ սպանութեան
մէջ մատ ունեցողներու մասին քննու-
թիւն մը կատարել, որուն ներկայ
պիտի պատուի Աւստրիացի պաշտօնեայ
մը:
«3.— Միլանտութիւն ամեն անոնց
դէմ որոնք համասերպ շարժումին
մասնակցեցան:
«Այս պահանջներու ընդունելու-
թեան համար 48 ժամ պայմանաժամ
պիտի տրուի ինքնայտ է թէ՛ Սերպիա

Հերար ընդունել այս պահանջները,
որոնք իր անկաս տերութեան արժա-
նատարութեանը կը վիրաւորեն:
Ասոր հետեւեալ պիտի ըլլայ պատե-
րազմի Հոս ամբողջովին համաձայն են
որ Աւստրիա յարմար վայրկեանէն
օգտուի նոյն իսկ աչքը առնելով ետ-
քէն պատահելիք կնճռուած ինչնէրը»:

Այս հեռագրին ծագումը, թուա-
կանը և յստակ արտայայտութիւնը՝
ամենակարեւոր վաւերագրի մը կան-
գամանքը կուտան իրեն:

Գերման պատուիրակութիւնը պա-
տասխանեց թէ «Թիւրք իսնէրի յի-
լարածոյ յայտնութիւնները, ընդունե-
լով իսկ թէ անխալ են, նոր բան մը
չեն աւելցնիր», սակայն բացի երկու
կարծեցեալ սխալներէ, խոսնուածութեամբ
զգուշացու լիճարանի վաւերագրի մը
վրայ, որուն յշտակալի սառուած-
թիւնը օրը օրին պատահող զէպքերը
հաստատեցին, և Գիւլթ Ինսէր ալ
զայն հրատարակած ըլլալուն համար
կեանքը վրայ տուաւ:

Գերմանիա, Մոսկոնայի դէմ պա-
տարազմ հրատարակելով Օգոստ. 3ին
զգուշացու խաղալ այն գերը զոր
այնքան ճարպիկութեամբ կատարած էր
քառասուն չորս տարի տառջ:
(Շարունակել)